ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan,edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 28-Ա

ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.12.2020 Թ. ԹԻՎ 09 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մարմարաշեն համայնքի ավագանու թիվ 09 նիստի օրակարգը

1.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2.ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ /2021 ԹՎԱԿԱՆ/ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3.ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՐՄԱՐԻԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ /2021 ԹՎԱԿԱՆ/ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4.ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ. ԲՅՈՒՋԵԻ <<ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՖՈՆԴԻՑ>> ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՄԵԿ ԱՄՍՎԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓՈՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ		կողմ. եմ.
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ		կողմ եմ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ		կողմ եմ
ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ	Գ. Մուրադյան	կողմ եմ
ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ		կողմ եմ
ՍԵՐՈԲՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ		կողմ եմ
ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ		կողմ եմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 29-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-14-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի և <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մարմարաշեն համայնքի 2021 թ.-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝.

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր / դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000/ տասնհինգ հազար/ դրամ.

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 /քսանհինգ հազար / դրամ.

-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար /դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 / հազար հինգ հարյուր/ դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2. համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 / հազար հինգ հարյուր/ դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ 2500/ երկու հազար հինգ հարյուր / դրամ.

4. համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ.

5. համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 30000 /երեսուն հազար/ դրամ.

6. համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 15000 /տասնհինգ հազար դրամ.

7.համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 /երկու հազար/ դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 /երեք հազար / դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000/չորս հազար/ դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 / յոթ հազար հինգ / դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 /տաս հազար/ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 /քսան հազար/ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-

մինչև 26 քառակուսիմետրընդհանուրմակերեսունեցողհիմնականոչհիմնականշինությունների ներսումվաճառքիկազմակերպմանդեպքում՝ 2000 /երկու հազար/ դրամ.

- 26-իցմինչև 50 քառակուսիմետրընդհանուրմակերեսունեցողհիմնականոչհիմնականշինությունների ներսումվաճառքիկազմակերպմանդեպքում՝ 3000 /երեքհազար / դրամ.

- 50-իցմինչև 100 քառակուսիմետրընդհանուրմակերեսունեցողհիմնականոչհիմնականշինությունների ներսումվաճառքիկազմակերպմանդեպքում՝ 4000 /չորս հազար / դրամ.

- 100-իցմինչև 200 քառակուսիմետրընդհանուրմակերեսունեցողհիմնականոչհիմնականշինությունների ներսումվաճառքիկազմակերպմանդեպքում՝ 7500 / յոթհազարհինգհարյուր/ դրամ.

- 200-իցմինչև 500 քառակուսիմետրընդհանուրմակերեսունեցողհիմնականոչհիմնականշինությունների ներսումվաճառքիկազմակերպմանդեպքում՝ 10000 /տասհազար /դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 /քսան հազար / դրամ.

8. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 105 /մեկ հարյուր հինգ/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9. համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 /քսան հինգ հազար/ դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 25000 /քսան հինգ հազար/ դրամ.

10. համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր / դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 /վեց հազար /դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 /տասներկու հազար/ դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 /տասնվեց հազար / դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 / քսանհինգ հազար / դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 35000 /երեսունհինգ հազար / դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 / հազար / դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 /երկու հազար / դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 / չորս հազար / դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 / ութ հազար/ դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 / քսանհինգ հազար / դրամ.

11.Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 /վեց հարյուր/ դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 / հազար / դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 450 / չորս հարյուր հիսուն / դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 112 /մեկհարյուր տասներկու/ դրամ.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 45/ քառասունհինգ/ դրամ :

12. Մարմարաշեն համայնքիանվանումը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 100000 /հարյուր հազար/ դրամ.

13. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 /երեք հազար / դրամ.

14. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 500000 / հինգ հարյուր հազար/ դրամ:

15. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝
ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ.
բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 /հինգ միլիոն/ դրամ.
գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝7000000 / յոթ միլիոն / դրամ.
դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 /տաս միլիոն / դրամ:
16. համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 3000 /երեք հազար/ դրամ.

17.ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով /շահագործման թույտվություն/ փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 /հինգ հազար/

18 .Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 3000 /երեք հազար/ դրամ.

19.Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 /երեք հազար/ դրամ.

20.Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 /երեք հազար/ դրամ..

21. 1.Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 /հարյուր/ դրամ:

2) ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 /հինգ/ դրամ:

2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 25 /քսանհինգ/ դրամ.

2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 /քսան/ դրամ.

3) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 /տասնհինգ/ դրամ.

4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 /երեք/ դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 /ութ/ դրամ.

5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 5 /հինգ/ դրամ.

6) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով.

7) շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով:

2.1. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 /հիսունի/ դրամ:

2.2. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

3. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 / երեք հազար/ դրամ:

2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 / տաս հազար/ դրամ.

3) ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին կամ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3.1. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված շենքերի, շինությունների և տարածքների մասով աղբի հեռացման հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող և ստացող կողմերի միջև կնքված պայմանագրով:

4. Աղբահանության վճար սահմանելու համար կիրառվող մեթոդները և աղբահանության վճարի դրույքաչափերը յուրաքանչյուր համայնքի համար սահմանվում են համայնքի ավագանու՝ օրենքով սահմանած կարգով՝ սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված դրույքաչափերի սահմաններում:

22. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափը ՝ համայնքի բնակիչների համար՝ 5000 /հինգ հազար / դրամ , այլ համայնքների բնակիչների համար 10000 /տաս հազար/ դրամ.

23.Համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից կատարվող անասնաբուժական ծառայության հետևյալ վճարները

1)Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն-500 դրամ

2) Ծննդօգնություն

1.թեթև միջամտություն-1000 դրամ

2.ծանր միջամտություն -5000 դրամ

3)Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից / բացառությամբ՝ <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/- մանրկենդանի 100 դրամ , խոշորկենդանի 200 դրամ

4)Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար-500 դրամ

5) Ախտահանություն-1 քառ. մետր 200 դրամ

6)Միջատազերծում /դեզինսեկցիա/-միքառ. մետր 100 դրամ

7)Կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/-1 քառ. մետր 200 դրամ

8)Արհեստական սերմնավորում-5000 դրամ

9)Կենդանու հերձում- մանր կենդանի 1000 դրամ , խոշոր կենդանի 3000 դրամ

10)Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելություն -1000 դրամ

11)Կենդանիների նախասպանդային զննում ՝ կախված կենդանու տեսակից- մանրկենդանի 1000 դրամ, խոշոր կենդանի 2000 դրամ

12)Կենդանիների հետսպանդային զննում –մանր կենդանի 1000 դրամ, խոշորկենդանի 2000 դրամ>>:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ		կողմ եմ	
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ		կողմ եմ	
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ			կողմ եմ
ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ	Հ. Մուրադյան	կողմ եմ	
ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ		կողմ եմ	
ՍԵՐՈԲՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ		կողմ եմ	
ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ		կողմ եմ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 30-Ն

ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ /2021 ԹՎԱԿԱՆ/ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Մարմարաշեն համայնքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն թիվ 1 հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել ավագանու 20 դեկտեմբերի 2019 թվականի N 46-Ն որոշումը :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ՍԵՐՈԲՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ

ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 31-Ն

ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՐՄԱՐԻԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ /2021 ԹՎԱԿԱՆ/ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Մարմարաշեն համայնքի <<Մարմարիկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափը համաձայն թիվ 2 հավելվածի :

2.Ուժը կորցրած ճանաչել 20 դեկտեմբերի 2019 թ.-ի թիվ 47-Ն որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ		կողմ են
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ		կողմ են
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ		ձեռնպահ է
ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ		կողմ են
ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ		կողմ են
ՍԵՐՈԲՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ		կողմ են
ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ		կողմ են

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 32_Ա

ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ. ԲՅՈՒՋԵԻ <<ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՖՈՆԴԻՑ>> ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՄԵԿ ԱՄՍՎԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓՈՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետով և հիմք ընդունելով ավագանու 25.12.2019թ.-ի թիվ 50-Ն որոշման 3-րդ կետի ա/ ենթակետը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

2020 թ. սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը ընկած ժամանակահատվածում Արցախի Հանրապետությունում տիրող պատերազմական իրավիճակներում ազատամարտիկներին աջակցելու և բարեգործություն ցուցաբերելու համար համայնքի ղեկավարին՝ Մարմարաշեն համայնքի 2020 թ. բյուջեի <<Աշխատողների աշխատավարձ և հավելավճարներ ֆոնդից>> տալ դրամական հավելավճար մեկ ամսվա աշխատավարձի չափով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ		կողմ եմ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ		կողմ եմ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ		կողմ եմ
ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ		կողմ եմ
ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ		կողմ եմ
ՍԵՐՈԲՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ		կողմ եմ
ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ		կողմ եմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված թիվ 1
Մարմարաշենի համայնքի ավագանու 2020թ.-ի
դեկտեմբերի 8-ի թիվ 30-ն որոշման

ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԵՎ ՄԱՐՄԱՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ / 2021 ԹՎԱԿԱՆ/

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 24
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը	Հավելավճար
Համայնքի ղեկավար		350000	
Հայեցողական պաշտոններ			
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	150000	
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	-	
Համայնքային ծառայության պաշտոններ			
Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	280000	
Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	279000	
Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	150000	
Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-2/	1	150000	15000
Համայնքապետարանի աշխատակզմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	149000	
Համայնքապետարանի աշխատակզմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-2/	1	140000	
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ			
Տարբեր գործառույթներ իրականացնող աշխատակիցներ			
Գրադարանավար	1	92620	
Մարզիչ	1	89620	
Պարուսույց	1	92620	
Տեխ. սպասարկման անձնակազմ			
Օպերատոր	1	120000	
Գործավար	1	120000	
Էլեկտրիկ	1	92620	
Պահակ	2	89620	
Հավաքարար	1	89620	
Բանվոր	2	89620	
Աղբահանության վարորդ	1	160000	
Անասնաբույժ	1	89620	
Հարկահավաք/աղբահանության վճար	1	Իր հավաքած գումարի 20%-ի չափով	
Այլ	1	89620	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված թիվ 2

Մարմարաշեն համայնքի ավագանու 2020 թ.-ի դեկտեմբերի 8 -ի թիվ 31-Ն որոշման

Մարմարաշեն համայնքի Նախադպրոցական ուսումնական հաստատության 2020թ. հաստիքացուցակը 4 խմբի համար 8 ժամյա աշխատանքի դեպքում

N	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափերը	
			դրույք	դրամ
1	Մանկապարտեզի տնօրեն	1	1	180000
2	Մեթոդիստ	1	1	160000
3	Դաստիարակ	1	1.12	160000
4	Դաստիարակ	1	1.12	160000
5	Դաստիարակ	1	1.12	160000
6	Դաստիարակ	1	1.12	155000
7	Երաժ. դաստիարակ	1	1	155000
8	Դաստիարակի օգնական	1	1	109000
9	Դաստիարակի օգնական	1	1	109000
10	Դաստիարակի օգնական	1	1	106000
11	Դաստիարակի օգնական	1	1	106000
12	Հաշվապահ	1	0.5	92620
13	Տնտեսվար	1	0.5	89620
14	Խոհարար	1	1	120000
15	Խոհարարի օգնական	1	1	100000
16	Բուժքույր	1	1	109000
17	Լվացարար	1	0.5	89620
18	Օժանդակ բանվոր	1	0.5	89620
19	Հավաքարար	1	0.5	89620
20	Գիշերային պահակ	1	1	89620
21	Հնոցապան	1	1	89620
22	Գործավար	1	0.5	92620

Համայնքի ղեկավար՝ Էդվարդ Հակոբյան